ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 888-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ճամբարակ համայնքի ղեկավար Վ.Ադամյանս քննելով Արտակ Առաքելյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ 02.05.2024թ. արձանագրությունը և կից նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

07.06.2024թ. «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարողից գրություն է ստացվել այն մասին, որ Արտակ Հարությունի Առաքելյանը «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում՝ «Արտանիշի» արգելոցում պետական սեփականություն հանդիսացող հողամասի վրա առանց հողօգտագործման իրավունք ունենալու, առանց թույլտվության տեղադրել է թվով 1 հատ շարժական 9x6 մետր չափերի տնակ և իրականացրել կիսակառույց 9x6 մետր չափերի շինարարություն: Կից ուղարկվել է ապօրինի շինարարություն իրականացնելու մասին արձանագրության պատճենը:

Այսինքն, Արտակ Հարությունի Առաքելյանը թույլ է տվել զանցանք, որը նախատեսված է «ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Արտակ Հարությունի Առաքելյանի կողմից «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում՝ «Արտանիշի» արգելոցում պետական սեփականություն հանդիսացող հողամասի վրա առանց հողօգտագործման իրավունք ունենալու, առանց թույլտվության թվով 1 հատ շարժական 9x6 մետր չափերի տնակ տեղադրելու և կիսակառույց 9x6 մետր չափերի շինարարություն իրականացնելու փաստի առթիվ հարուցել վարչական վարույթ և իրականացնել քննարկում 2024

թվականի օգոստոսի 20-ին ժամը 12:00-ին ք. Ճամբարակ, Գարեգին Նժդեհի 125 հասցեում, Ճամբարակի համայնքապետարանի շենքում:

2. Հարուցված վարչական վարույթի մասին եռօրյա ժամկետում ծանուցել Արտակ Առաքելյանին:

Համայնքի ղեկավար՝ ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ

20 __ թ. _____ ____

ք.Ճամբարակ